ԿԼԻՄԱՅԱԿԱՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Փաստաթուղթը պատրաստվել է CENN-ի կողմից “Կլիմայակայուն գյղատնտեսություն-PRAISE Marneuli” ծրագրի շրջանակներում: Անհրաժեշտության դեպքում փաստաթուղթը կթարմացվի ամբողջությամբ կամ մասնակի:

2022 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ 4

2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ... 4

3. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ 5

4. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ և ՉԱՓԸ 6

5. ՄՐՑՈՒՅԹԻ ՓՈՒԼԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ և ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ/ԳՆԱՀԱՏՈՒՄ 8

6. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 14

7. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄՈՆ ՀԵՏԱԳԱ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ 14

1. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Կլիմայակայուն գյուղատնտեսություն - PRAISE Marneuli» ծրագիրը ֆինանսավորվում է HEKS-EPER-ի կողմից և ծառայում է Մառնեուլիի մունիցիպալիտետի բնակչության (հատկապես խոցելի խմբերի) եկամուտներ ստեղծելու կարողությունների բարձրացմանը՝ խթանելով և հանրահռչակելով էկոբարեկամական և կլիմայակայուն գյուղատնտեսությունը (CRA):

Ծրագրի նպատակն է՝ նվազեցնել աղքատությունը մունիցիպալիտետի գյուղերում, բարելավել կյանքի որակը և լուծել տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և մարդու իրավունքների հետ կապված հարցեր: Այս նպատակներին կարելի է հասնել գյուղատնտեսության մրցունակության բարելավման, բնական ռեսուրսների կայուն կառավարման խթանման և կլիմայի նկատմամբ կայուն գյուղական տնտեսությունների և տեղական համայնքների կառուցման միջոցով: Նախագիրը նպաստում է փոքր ձեռներեցների, կանանց, երիտասարդների, էթնիկ փոքրամասնությունների և այլ տեղական դերակատարների համար գիտելիքների և նորարարական մոտեցումների հասանելիության բարձրացմանը, արժեշղթայի զարգացմանը (նախագիծը հիմնականում կենտրոնանում է այգեգործության արժեքային շղթայի ամրապնդման վրա), լավագույն փորձի ցուցադրմանը, ստեղծմանը, գործարար կապերի և աշխատանքի նոր հնարավորությունների աջակցությանը:

2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Կլիմայակայուն գյուղատնտեսության դրամաշնորհային մրցույթի նպատակն է բացահայտել և ֆինանսավորել այնպիսի նախաձեռնություններ և ծրագրեր Մառնեուլիի մունիցիպալիտետում, որոնք ծառայում են **կլիմայակայուն գյուղատնտեսական պրակտիկաների ներդրմանը և դրանով՝ եկամուտներ ստեղծելու հնարավորությունների ավելացմանը և տեղական բնակչության կյանքի որակը բարելավմանը:**

Դրամաշնորհային մրցույթի շրջանակներում ֆինանսավորվելու են այնպիսի նախաձեռնություններ և ծրագրեր, որոնք ծառայում են՝

- Կլիմայակայուն և էկոլոբարեկամական գյուղատնտեսական տեխնոլոգիաների և փորձի ներդրմանը և բնական ռեսուրսների կայուն կառավարմանը,
- Գյուղատնտեսության ոլորտում կանանց, երիտասարդների, էթնիկ փոքրամասնությունների և այլ խոցելի խմբերի (սոցիալապես խոցելի խմբեր, էկոմիգրանտներ, ներքին տեղահանվածներ, հաշմանդամներ) եկամուտ ստեղծելու հնարավորությունների զարգացմանը,
- Գյուղատնտեսական գործունեության կլիմայի փոփոխության հանդեպ հարմարեցմանը և դրա մրցունակության բարձրացմանը,

- Տեղում կայուն բիզնես և/կամ սոցիալական ծառայությունների ստեղծմանը, որոնք կնպաստեն կլիմայի նկատմամբ կայուն գյուղատնտեսության զարգացմանը և շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Դրամաշնորհային մրցույթի շրջանակներում ներկայացված նախաձեռնությունները և ծրագրերը պետք է արձագանքեն Մառնեուլիի մունիցիպալիտետի համար կլիմայակայուն գյուղատնտեսության շրջանակային փաստաթղթում նշված մարտահրավերներին:

Նշված ծրագրի շրջանակներում CENN-ը կհայտարարի առնվազն մեկ դրամաշնորհային մրցույթ: Հայտարարված մրցույթի մասին տեղեկությունը հասանելի կլինի «PRAISE - MARNEULI» ծրագրի ֆեյսբուքյան էջիում և CENN-ի www.cenn.org կայքում: Ինչպես նաև, ծրագրի թիմը տեղեկատվական հանդիպումներ կանցկացնի Մառնեուլիի մունիցիպալիտետում:

3. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ

3.1. Դրամաշնորհային մրցույթին իրավունք ունեն մասնակցել հետևյալ սուբյեկտները.

1. Մառնեուլիի մունիցիպալիտետում բնակվող Վրաստանի չափահաս քաղաքացիներ (ֆիզիկական անձինք),
2. Անհատների խմբեր (նախաձեռնող խմբեր),
3. Մառնեուլիի մունիցիպալիտետում գրանցված և/կամ գործող իրավաբանական անձինք (հասարակական կազմակերպություն, համայնքային կենտրոն, ասոցիացիա, ՍՊԸ, անհատ ձեռնարեց, կոոպերատիվ),
4. Մառնեուլիի մունիցիպալիտետի մշակութային և կրթական հաստատություններ, կազմակերպություններ:

Վերոնշյալ անձինք նախագիծը պետք է իրականացնեն Մառնեուլիի մունիցիպալիտետում:

Նշում 1. Նախագծի դիմորդը կարող է լինել ֆիզիկական անձ կամ անձանց խումբ, սակայն նախագիծն իրականացնելու վերաբերյալ հանձնաժողովի դրական որոշման դեպքում դիմորդից պահանջվում է ստեղծել իրավաբանական անձ:

Նշում 2. Դիմորդները, ովքեր ունեն սոցիալապես անապահովի կարգավիճակ, պետք է հաշվի առնեն, որ դրամաշնորհ ստանալու դեպքում պետությունը կարող է վերանայել նշված կարգավիճակի կրկին տրամադրման հարցը:

3.2. Մրցույթին մասնակցելու իրավունք չունեն `

1. Քաղաքական կուսակցություններ,
2. Կրոնական կազմակերպություններ,
3. Ֆինանսական հաստատություններ (բանկ, միկրոֆինանսական հաստատություն, գրավատուն և այլն),
4. Կազմակերպություններ, ասոցիացիաներ, միություններ, նախաձեռնող խմբեր և այլն, որոնք խտրականություն են ցուցաբերում անհատների և/կամ առանձին խմբերի նկատմամբ՝ ըստ սեռի, կրոնական հայացքների, էթնիկական ծագման և սեռական կողմնորոշման:

Բացի վերը նշվածից, մրցույթին մասնակցությունը չի դիտարկվի հետևյալ դիմորդների համար՝

- Առաջարկվող օբյեկտը (հողամաս, շենք և այլն), որտեղ նախատեսվում է իրականացնել նախագիծը, ծանրաբեռնված է հիփոթեքով, գրավով, արգելանքով,
- Աառաջարկվող օբյեկտը նրանց սեփականությունը չէ (հող, շենք և այլն) կամ չունեն նշված օբյեկտի երկարաժամկետ վարձակալության պայմանագիր (առնվազն 5 տարի): Վարձակալության մասում կոնկրետ ծրագրի ֆինանսավորման հարցը կորոշվի անհատական մոտեցմամբ՝ կախված ֆինանսավորվելիք ծրագրի բովանդակությունից, մասշտաբից և բյուջեից:

4. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ և ՉԱՓԸ

Դրամաշնորհային հայտի շրջանակներում պահանջվող նվազագույն գումարը (դրամաշնորհը) կազմում է 4.000 լարի, իսկ առավելագույնը՝ 17.000 լարի:

Դրամաշնորհային մրցույթը կաջակցի ինչպես բիզնես/կոմերցիոն, այնպես էլ սոցիալական և կրթական ծրագրերի իրականացմանը: **Բիզնես/առևտրային նախագծերի դիմորդներից պահանջվում է ներդրում կատարել ներկայացված ծրագրի ընդհանուր բյուջեի առնվազն 20%-ի չափով (համաֆինանսավորում կհամառվի միայն դրամական մասնակցությունը), իսկ սոցիալական և կրթական ծրագրերի դիմորդները պարտավոր չեն ներդրում կատարել:**

Ծրագրի բյուջեի համաֆինանսավորման տոկոսի հաշվարկման բանաձևի օրինակ.

A. Ծրագրի ընդհանուր արժեք՝ օրինակ 18.000 լարի:

B. Համաֆինանսավորում՝ օրինակ 20%:

C. Դիմորդի համաֆինանսավորում՝ 3.600 լարի (A*B = 3.600):

D. Դրամաշնորհային ֆոնդից պահանջվող գումարը կազմում է 14.400 լարի (A-C=14.400)

Նշում 1. Դրամաշնորհային ֆոնդից պահանջվող գումարը չպետք է գերազանցի **17.000 լարի:**

Ծրագրի իրականացման ժամկետը բիզնես/առևտրային նախաձեռնությունների դեպքում չպետք է գերազանցի **4 ամիսը,** իսկ սոցիալական և կրթական նախաձեռնությունների դեպքում՝ **6 ամիսը:**

Նշում 2. Դրամաշնորհի ֆինանսավորումը, ինչպես նաև համաֆինանսավորման գումարը նախատեսված է միայն ներդրումային նպատակների ֆինանսավորման համար և չի նախատեսում ընթացիկ ծախսերի ծածկում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ.

- Ծրագրում նշված օբյեկտի համար (օրինակ՝ հողատարածք, շենք), որտեղ նախատեսվում է իրականացնել նախագիծը, դիմորդը ծրագրի հետ՝ հայտի հավելվածի տեսքով, պետք է ներկայացնի սեփականության գրանցման փաստաթուղթ կամ երկարաժամկետ վարձակալության (առնվազն 5 տարի) պայմանագիր:
- Շահառուն, առաջին հերթին, պետք է ամբողջությամբ ծախսի իր համաֆինանսավորման գումարը և ներկայացնի համապատասխան ֆինանսական փաստաթղթերը: Այն բանից հետո, երբ CENN-ը կստանա շահառուից իր համաֆինանսավորման ամբողջական ծախսման ֆինանսական փաստաթղթերը և մոնիթորինգի արդյունքում կորոշի հանձնարարված աշխատանքի որակյալ կատարումը, կազմակերպությունը կսկսի ֆինանսավորել դրամաշնորհով նախատեսված աշխատանքները և ինքը կապահովի այս գումարով որոշված ցանկացած տեսակի ապրանքների և ծառայությունների գնումը, տեղափոխումը և/կամ տեղադրումը: Համաֆինանսավորում չպահանջող սոցիալական և կրթական ծրագրերի դեպքում CENN-ն ապահովում է դրամաշնորհի գումարի ծախսումը:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻՑ ՉԵՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԾԱԽՍԵՐԸ՝

1. Աշխատավարձեր (բացառիկ դեպքերում կարող է ֆինանսավորվել փորձագետի/մասնագետի վարձը),
2. Խոշոր եղջերավոր անասունների, թռչունների, մեղվաընտանիքների գնում,
3. Անշարժ գույքի գնում,
4. Ավտոմեքենա, միկրոավտոբուս, ավտոբուս և այլն(բացառությամբ բացառիկ դեպքերի՝ կախված նախագծի առանձնահատկություններից և

կարիքներից),

5. Անհատական մասնակցություն սեմինարներին, աշխատաժողովներին և կոնֆերանսներին,
6. Ուսումնասիրությունների կամ վերապատրաստումների անհատական ֆինանսավորում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հիմնական գործունեության բաղադրիչ է,
7. Ակադեմիական և գիտական ուսումնասիրություններ,
8. Կրթական/գիտական դրամաշնորհներ,
9. Մարդասիրական ակցիաներ և գործունեություն.
10. Պարտքեր և ապագա հնարավոր կորուստների համար նախատեսված ծախսեր,
11. Վճարվող տոկոսներ, տույժեր, տուգանքներ,
12. Արտարժույթի փոխարկման հետևանքով առաջացած վնաս,
13. Երրորդ անձանց տրված վարկեր,
14. Ապահովագրական ծախսեր,
15. Օգտագործված սարքավորումներ, հաստոցներ, նյութեր և այլն,
16. Վրաստանի գործող օրենսդրությամբ արգելված գործունեություն:

5. ՄՐՑՈՒՅԹԻ ՓՈՒԼԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ և ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ/ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Դրամաշնորհային մրցույթը բաղկացած է հետևյալ փուլերից՝

I փուլ. Ամբողջական ծրագրի հայտի ներկայացում,
II փուլ. Դրամաշնորհային հանձնաժողովի կողմից հայտերի քննարկում և գնահատում,
III փուլ. Մոնիթորինգ և հարցազրույց,
IV փուլ. դրամաշնորհի հայտի հաստատում/պայմանագրի ստորագրում:

I ՓՈՒԼ. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Դիմորդը դրամաշնորհային գաղափարի ամբողջական հայտ ներկայացնելիս պետք է ներկայացնի հետևյալ ձևաթղթերը և հավելվածները.

Ձևաթղթեր (լրացված ձևերը պետք է ստորագրվեն)

- **Ձև 1.** Լրացված ծրագրի հայտ,
- **Ձև 2.** Ծրագրի մանրամասն բյուջե (գումարները պետք է նշվեն ներառյալ ԱԱՀ),
- **Ձև 3.** Շահույթի և վնասի քաղվածք,
- **Ձև 4.** ծրագրի բյուջեով նախատեսված ծախսերը հաստատող ինվոյսներ (Այն դեպքում, երբ ծառայություններ/ապրանքներ մատակարարող ընկերությունը չի կարող պոտենցիալ շահառուին ինվոյս տրամադրել) և պահանջվող հավելվածներ)

Հավելվածներ՝

- **Հավելված 1.** Ծրագրում նշված օբյեկտի (օրինակ՝ հողատարածք, շենք-շինություն), որտեղ նախատեսվում է իրականացնել նախագիծը, սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ կամ երկարաժամկետ վարձակալության (առնվազն 5 տարի) պայմանագիր,
- **Հավելված 2.** Եթե դիմորդը իրավաբանական անձ է, թարմացված քաղվածք ձեռնարկատիրական և ոչ ձեռնարկատիրական իրավաբանական անձանց ռեգիստրից,
- **Հավելված 3.** Ծրագրի բյուջեով նախատեսված ծախսերը հաստատող ինվոյսներ (Այն դեպքում, երբ ծառայություններ/ապրանքներ մատակարարող ընկերությունն է ինվոյս տրամադրում շահառուին):
- Անհրաժեշտության դեպքում այլ փաստաթղթեր:

Լրացված ձևաթղթերը և հավելվածները պետք է ուղարկվի էլեկտրոնային եղանակով, ստորագրված և/կամ առկայության դեպքում վավերացված կնիքով, հետևյալ էլ. հասցեին՝ grants@cenn.org:

Նամակի վերնագրում պետք է նշվի հետևալը՝ **«Դրամաշնորհային մրցույթ_PRAISE Marneuli 2022»**: Մեկ դիմորդ կարող է ներկայացնել միայն մեկ հայտ: Դիմորդը կստանա հայտի ներկայացման հաստատում՝ պատասխան նամակով:

Հայտերը կարող են ներկայացվել վրացերեն, ադրբեջաներեն և/կամ հայերեն լեզուներով, սակայն հայտին պետք է կցվի նոտարական վավերացմամբ վրացերեն թարգմանությունը:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2023 թվականի Հունվարի 25-ը՝ ժամը 18:00: Ուշ ներկայացված և/կամ ձեռքով լրացված ծրագրային գաղափարները չեն ընդունվի:

Հայտերի լրացման և ներկայացման հետ կապված տեխնիկական հարցերով հետաքրքրված անձանց հետ խորհրդակցություններ կանցկացվեն մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, ինչպես հեռավար, այնպես էլ նախապես պլանավորված դեմ առ դեմ տեղեկատվական հանդիպումների շրջանակներում:

II ՓՈՒԼ՝ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ամբողջությամբ լրացված հայտերը քննարկելու համար կստեղծվի 7 անդամից բաղկացած դրամաշնորհային հանձնաժողով՝ CENN-ի ներկայացուցիչներ, ծրագրի շրջանակներում ստեղծված բազմաոլորտ աշխատանքային խմբի (MSWG) ներկայացուցիչներ, դոնոր կազմակերպության ներկայացուցիչներ:

Ամբողջական հայտերի քննարկման գործընթացում, կախված ծրագրի կարիքներից և առանձնահատկություններից, հնարավոր է հրավիրվեն փորձագետներ տարբեր ոլորտներից: Դրամաշնորհների հանձնաժողովը կքննարկի նրանց կարծիքը և առաջարկությունները՝ վերջնական որոշումների կայացման գործընթացում:

Հայտերի ֆինանսա-վարչական ստուգում

Դրամաշնորհի հայտը՝ նախքան ընտրության և գնահատման գործընթացը, կանցնի ֆինանսական և վարչական ստուգմում (ներկայացման վերջնաժամկետ, հայտի ձև, հայտատուի տվյալներ, հավելվածների ճշգրտություն, բյուջեի համապատասխանություն և այլն)::

Ֆինանսա-վարչական ստուգման փուլում հայտնաբերված թերությունների դեպքում հանձնաժողովը դիմորդի համար կսահմանի ողջամիտ ժամկետ՝ թերությունները վերացնելու համար: Ողջամիտ ժամկետը լրանալուց հետո, եթե թերությունը չվերացվի, դրամաշնորհի հայտը կհեռացվի մրցույթից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հայտը կգնահատվի հետևյալ չափանիշներով.

Գնահատման չափանիշներ	Միավոր
1. **Գաղափարի արդիականությունը և համապատասխանությունը ծրագրի նպատակին և առաջնահերթ ուղղություններին:** Ծրագրի գաղափարը վերաբերում է թիրախային մունիցիպալիտետին և կապված է կլիմայակայուն գյուղատնտեսական պրակտիկաների և էկոբարեկամական տեխնոլոգիաների ներդրման ու խթանման հետ, և համապատասխանում է դրամաշնորհային մրցույթի մեկ կամ մի քանի առաջնահերթ ոլորտներին (տե՛ս Գլուխ 2):	**15 միավոր**
2. **Ծրագրի իրականացման ռազմավարություն, գործողությունների պլան և ռիսկերի վերլուծություն** Բիզնես/կոմերցիոն ծրագրերի դեպքում. ծրագրի հայտում հստակ նշված է, թե դրամաշնորհային ծրագրի իրականացումը ինչպես կնպաստի դիմորդի գյուղատնտեսական արտադրանքի բարելավմանը, ինչպիսին է իրացման շուկան, մրցակցությունը, ովքեր կլինեն սպառողները: Սոցիալական/կրթական ծրագրերի դեպքում՝.ծրագրի հայտում հստակ նշված է, թե դրամաշնորհային ծրագրի իրականացումը ինչպես կնպաստի կայուն սոցիալական ծառայությունների ստեղծմանը: Գործողությունների պլանում նշված գործողությունները ողջամիտ են և համապատասխանում են ժամկետներին (ծրագրի իրականացման տևողությունը կոմերցիոն ծրագրերի դեպքում չպետք է գերազանցի՝ 4 ամիսը, իսկ սոցիալական/կրթական ծրագրերի դեպքում՝6 ամիսը): Ծրագրի հայտում գնահատված են ծրագրի իրականացման ռիսկերը և առաջարկվում են դրանց նվազեցման ուղիներ:	**20 միավոր**
3. **Ծրագրի իրականացմամբ ստացված արդյունքները** Նախագիծը նպաստում է տեղական բնակչության եկամուտների ստեղծմանը/ավելացմանը և կյանքի որակի բարելավմանը, նոր ծառայությունների ներդրմանը: (Օրինակ՝ նոր աշխատատեղերի ստեղծում, առկա աշխատանքային պայմանների բարելավում, գիտելիքի և նորարարության տարածում):	**20 միավոր**
4. **Կանանց, երիտասարդների, էթնիկ փոքրամասնությունների և այլ խոցելի խմբերի հզորացում և ինտեգրում.** Ծրագիրն արձագանքում է կանանց, երիտասարդների, էթնիկ փոքրամասնությունների և այլ խոցելի խմբերի կարիքներին, ծառայում է նրանց սոցիալական և տնտեսական հզորացմանը, և նախատեսում է փոխադարձ համագործակցություն (diapraxis) էթնիկ և սոցիալապես տարբեր խմբերի միջև:	**15 միավոր**

5. **Գիտելիք, փորձ և կարողություններ** Դիմորդն ունի համապատասխան գիտելիքներ և/կամ փորձ ներկայացված ծրագրի իրականացման համար: Կան նաև նախադրյալներ, բնապահպանական գործոններ և ռեսուրսներ (մարդկային, տեխնիկական և այլն), որոնք նպաստում են ծրագրի իրականացմանը:	**5 միավոր**
6. **Կայունություն** Հայտում երևում է, թե որքանով է կենսունակ գաղափարը և որքան երկարաժամկետ են դրա արդյունքները:	**10 միավոր**
7. **Ծրագրի բյուջեն և դրամաշնորհի գումարը** Ծրագրի բյուջեն ողջամիտ է, իրատեսական և արտացոլում է դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործումը: Պահանջվող բյուջեն չի ներառում արգելված ծախսերը (տես Գլուխ 4):Ինչպես նաև, պահանջվող գումարը համապատասխանում է մրցույթի ֆինանսավորման չափանիշներին: (տե՛ս նաև գլուխ 4):	**10 միավոր**
8. **Պահանջվող փաստաթղթերի ամբողջականությունը** Դիմողի կողմից ներկայացված են բոլոր պահանջվող փաստաթղթերը(տե՛ս Գլուխ 5, Փուլ I):	**5 միավոր**

Դրամաշնորհային հայտերը հանձնաժողովի անդամների կողմից կգնահատվեն անհատապես՝ ըստ վերոնշյալ չափանիշների: : Յուրաքանչյուր հայտի համար կամփոփվեն հանձնաժողովի անդամների անհատական գնահատման միավորները և կհաշվարկվի դրանց միջին թվաբանականը, որը ներկայացնում է կոնկրետ դրամաշնորհային հայտի գնահատման միավորը: Առավելագույն միավորներ հավաքած դրամաշնորհային հայտերը կստանան ֆինանսավորում:

Հայտի գնահատման գործընթացում դրամաշնորհային հանձնաժողովը իրավասու է դիմողին առաջարկություններ ներկայացնել ծրագրի գաղափարի կատարելագործման համար: Ինչպես նաև, հայտում նշված հանգամանքները ճշտելու նպատակով դրամաշնորհային հանձնաժողովն իրավասու է դիմողից խնդրել կոնկրետ հարցի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն և/կամ պարզաբանումներ տրամադրել, ևտեղում ճշտել փաստերն ու հանգամանքները:

Հաշվի առնելով վերը նշված բոլոր չափանիշները՝ ընտրության արդյունքները կհաղորդվեն դիմորդներին ինչպես դրական, այնպես էլ բացասական պատասխանի դեպքում: Բացասական պատասխանի դեպքում գրավոր հարցման հիման վրա դիմողին կտրվի գրավոր պատասխան մերժման պատճառների մասին:

III ՓՈՒԼ՝ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Երկրորդ փուլի ավարտից հետո, դիմորդների հետ համաձայնեցնելով, կպլանավորվի և կիրականացվի հնարավոր ֆինանսավորվող ծրագրերի տեղում մոնիտորինգ և հարցազրույցներ պոտենցիալ շահառուների հետ:

ՓՈՒԼ IV - ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ/ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Հաղթող ծրագրերի հետ կկնքվի դրամաշնորհային պայմանագիր, և ծրագրերը կիրականացվեն:

Շահերի բախում, պայմանագիր և գնումներ

Ընտրվելուց հետո ծրագրի հայտերը կներկայացվեն CENN-ի պատասխանատու անձին՝ վերջնական քննարկման համար: Եթե այս փուլում CENN-ը հայտնաբերի համաձայնեցված և անհրաժեշտ ընթացակարգերից որևէ շեղում կամ շահերի բախում, իրավասու է կասեցնել դրամաշնորհի համաձայնագրի ստորագրումը: Եթե դիմումը և ուղեկցող բոլոր փաստաթղթերը կարգին են, ապա հաջողակ դիմորդը դրամաշնորհային պայմանագիր կկնքի CENN-ի հետ: Պայմանագրում մանրամասն կներկայացվի երկու կողմերի դերն ու պարտականությունները ծրագրի իրականացման և ֆինանսավորման հարցում, ինչպես նաև համաձայնության պայմանները:

Պայմանագիրը ստորագրելուց հետո դրամաշնորհառուն պետք է ծախսի իր համաֆինանսավորման գումարը և ներկայացնի համապատասխան ֆինանսական փաստաթղթերև, իսկ դրամաշնորհի գումարը ծախսումը կապահովի CENN-ը (Սոցիալական և կրթական նախագծերի դեպքում նույնպես CENN-ը կապահովի դրամաշնորհի գումարի ծախսումը): Համաֆինանսավորման միջոցները դրամաշնորհային ֆոնդի հետ միասին կօգտագործվեն դիմորդի բյուջեում նշված ծառայությունների մատուցման, ապրանքների ձեռքբերման, տեղափոխման և/կամ տեղադրման համար:

Ծրագրի ավարտից հետո բոլոր ակտիվները կփոխանցվեն դիմորդին, որը պատասխանատու կլինի դրանց շարունակական օգտագործման և պահպանման համար:

6. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Դրամաշնորհային մրցույթի շրջանակներում դրամաշնորհային գործընթացի հետ կապված դիմումներն ու բողոքները քննարկելու նպատակով կստեղծվի դիմումների և բողոքների հանձնաժողով: Դիմումների և բողոքների հանձնաժողովն իր իրավասության սահմաններում կուսումնասիրի բողոքի հանգամանքները՝ դիմումի կամ բողոքի գրանցումից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում և կտեղեկացնի դիմորդին իր որոշման մասին:

7. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Ծրագրի ընթացքում բոլոր իրավական և ֆինանսական փաստաթղթերը պետք է հասանելի լինեն դրամաշնոր տրամադրողին՝ ծրագրի իրականացման և մոնիտորինգի փուլում: Վերոնշյալ փաստաթղթերը չեն հրապարակվի, եթե այն չի պարունակում օրենքով և դրամաշնորհային պայմանագրով նախատեսված խախտումներ: Շահառուն կազմում և ներկայացնում է պարբերական հաշվապահական հաշվետվություններ, կատարում է բոլոր հարկային պահանջները՝ Վրաստանի օրենսդրությանը համապատասխան: Նշված փաստաթղթերը մոնիթորինգի թիմին հասանելի կլինեն 5 տարվա ընթացքում:

Ծրագրի շրջանակներում աջակցվող նախագծերը պետք է մնան գործառնական և ծառայեն իրենց նպատակին՝ դիմողի կողմից համաձայնեցված ժամանակահատվածի ընթացքում: Շահառուները պետք է ապահովեն ֆինանսավորվող ծրագրերի (ներառյալ դոնոր) տեսանելիությունը՝ փորձի փոխանակման նպատակով: Ստորագրման օրվանից երեք (3) տարվա ընթացքում՝ CENN-ի խնդրանքի հիման վրա, շահառուն ապահովում է ծրագրի ցուցադրումը բոլոր շահագրգիռ կողմերին:

ԿԼԻՄԱՅԱԿԱՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ